

**ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՄԲ ԴԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ  
ՓՈՒԼԻ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ  
ՄԱՐՏԱՐԿՐԱՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության  
ինստիտուտի ասպիրանտ

Բանալի բառեր. տնտեսական զարգացում, Եվրասիական տնտեսական միություն, արտաքին շուկ, տնտեսության ճկունություն, մակրոտնտեսական կայունություն

ՀՀ տնտեսությունը 2014թ. սեպտեմբերին Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից դասակարգվել է որպես տնտեսական զարգացման արդյունավետությամբ պայմանավորված փուլ մտած երկիր<sup>1</sup>: Այս փուլում երկրները պետք է ավելի արդյունավետ արտադրական գործընթացների անցընեն և բարձրացնեն արտադրանքի որակը, քանի որ բարձրացող աշխատավարձերի պարագայում, այն չպետք է ուղեկցվի գների բարձրացմամբ: Իսկ այս պարագայում երկրի մրցունակությունը պայմանավորում են բարձրագույն կրթությունը և վերապատրաստումը, արդյունավետ ապրանքների, աշխատանքի, զարգացած ֆինանսական շուկաները, առկա տեխնոլոգիաներից առավելագույն օգտվելու կարողությունը, ինչպես նաև մեծ չափերի հասնող տեղական կամ արտաքին շուկաները: Թվարկված գործոններից շուկայի չափն է, որ պետք է լինի ՀՀ կառավարության առաջնայնություններից մեկը, քանի որ համաձայն Համաշխարհային մրցունակության ցուցանիշի «շուկայի չափ» ենթացուցանիշի արժեքով ՀՀ տնտեսությունը 144 երկրների մեջ զբաղեցնում է 118-րդ տեղը: Այս գործոնը կարևոր է նրանով, որ այն ազդում է արտադրողականության վրա, քանի որ մեծ չափերի հասնող շուկան հնարավորություն է տալիս ընկերություններին մասշտաբի էֆեկտի հասնել և օգտվել դրա ընձեռած հնարավորություններից: Գլոբալիզացիայի պարագայում, միջազգային շուկաները հանդես են գալիս որպես տվյալ երկրի ներքին շուկայի փոխարինող, հատկապես փոքր երկրների դեպքում հատկապես այդ

---

<sup>1</sup> Sala-i-Martin, Xavier, Bilbao-Osorio, Beñat, Di Battista, Attilio, Drzeniek Hanouz, Margareta, Geiger, Thierry and Galvan, Caroline. (2014) “The Global Competitiveness Index 2014–2015: Accelerating a Robust Recovery to Create Productive Jobs and Support Inclusive Growth,” Chapter 1.1 in *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, pp.8, 10-11, 18.

երկրի ընկերությունների կողմից: Այս ենթացուցանիշի մեջ ներառված ՀՀ ցուցանիշները առավելապես թերություն են համարվում (տե՛ս աղյուսակ 1)<sup>2</sup>:

**Աղյուսակ 1.** ՀՀ շուկայի չափը նկարագրող ցուցանիշներ ըստ Մրցունակության համաշխարհային զեկույցի (2014-2015)<sup>3</sup>

Ցուցանիշ	Միավոր	Տեղ
Տեղական շուկայի չափի ինդեքս, (տվյալ հանրագումարի նորմալացված արժեք՝ ՀՆԱ+ապրանքների և ծառայությունների ներմուծում-ապրանքների և ծառայությունների արտահանում, 2013թ.)	2.6*	111
Արտաքին շուկայի չափի ինդեքս (ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալի նորմալացված արժեք, 2013թ.)	3.2*	126
Գնողունակության պարիտետով արտահայտված ՀՆԱ (մլրդ միջազգային դոլար), 2013թ.	20.4	118
Արտահանումը ՀՆԱ-ի նկատմամբ, 2013թ. (%)	21.9	127

\*Նշում՝ 1-7 (առավելագույն արժեք) սանդղակով

ՀՀ արտահանման ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ ոչ միայն բավականին փոքր է, այլ նաև արտահանման ծավալն էլ մեծ չէ այլ երկրների համեմատ, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ ՀՀ-ում արտադրողականության բարձրացման տեսանկյունից առաջնային է դառնում շուկայի չափերի ընդլայնումը, քանի որ միայն ներքին շուկան չի կարող ապահովել մասշտաբի էֆեկտ (տնտեսապես հիմնավորված չի լինի նոր տեխնոլոգիաների ներդրումը, արտադրական գործընթացների արդիականացումը՝ ինքնարժեքի իջեցման նպատակով, եթե միայն ՀՀ-ում արտադրանքի իրացնելու տեսանկյունից տվյալ շուկայում մրցակցությունը բավականին ուժեղ չէ): Իսկ օտարերկրյա շուկաներում մրցակցությունը բերելու է նրան, որ ՀՀ ընկերությունները բարձրացնեն արտադրանքի որակը, նոր և ավելի արդյունավետ գործընթացներ ներդնեն՝ գործառնական արդյունավետություն ապահովելու նպատակով<sup>4</sup>: Սակայն, ինքնին գործառնական արդյունավետությունը այլ շուկաներում մրցակցությանը դիմակայելու անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է, քանի որ ընկերության մրցակցային ռազմավարությունը տարբերվելու մեջ է կայանում: Մյուս կողմից ՀՀ-ն կարող է արդյունավետություն ապահովել ներգրավելով ՕՌԽ, քանի որ օտարերկրյա ընկերությունները կամ ներդրողները իրենց հետ բերում են նոր տեխնոլոգիաներ, կառավարման

<sup>2</sup> WEF (2014). *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, p.113.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 113, 514-517:

<sup>4</sup> Porter, Michael (1998) *On Competition*, A Harvard Business Review Book, Boston, MA: Harvard Business School Press, pp.40, 42-46.

մշակույթ, գործընթացներ են ներդնում, որն էլ արտադրողականության բարձրացման հիմքն է (գործառնական արդյունավետություն): Այս պարագայում արտադրողականության աճը չի ուղեկցվում աշխատողների քանակի կրճատմամբ, ինչն էլ 2011-2013թթ. իրական արտադրողականության աճի պատճառն էր ՌՅ-ում,<sup>5</sup> այլ նպաստում է ընդհանուր գործունային արտադրողականության աճի տմեպերի մեծացմանը: ՕՈՒՆ-ը նաև կնպաստի ՅՆԱ-ի ավելի բարձր աճի տեմպերին՝ ավելացնելով իրական կապիտալի պաշարի աճի տեմպը, ինչպես նաև զբաղվածների թվի աճը իր հերթին կնպաստի ավելի մեծ աճի տեմպին: ՌՅ-ի ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո, երկիրը հիմնականում կներգրավի «արդյունավետություն» և միաժամանակ «շուկա փնտրող» օտարերկրյա ընկերությունների, որոնց նպատակն է լինելու գործառնական արդյունավետության և ռազմավարական դիրքավորման միջոցով մրցակցային առավելության հասնելը, հատկապես ՌԴ շուկայում (հատկապես միջնաժամկետ հատվածում ՌԴ տնտեսական աճի տեմպերի վերականգնման պարագայում՝ պայմանավորված նավթի գների բարձրացմամբ), ինչ էլ կնպաստի ՌՅ արտահանման ծավալների աճին՝ հանգեցնելով ընդհանուր գործունային արտադրողականության աճի տեմպի ավելացմանը: ՕՈՒՆ-ի ներհոսքի, ինչպես նաև արտահանման ծավալների աճը ՌՅ տնտեսությունը ավելի խոցելի են դարձնում հատկապես ՌԴ տնտեսական աճի տեմպերի նկատմամբ, մինչդեռ ավելի դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածքը (երկրների և ապրանքների կտրվածքով) կարող է նվազեցնել խոցելիության աստիճանը (տնտեսական հիմքի բազմազանությունը)՝ ՌՅ տնտեսության ճկունության աստիճանի բարձրացման ճանապարհով:

«Centennial Group International»-ի<sup>6</sup> մասնագետներն ասիական երկրների տնտեսության ճկունության աստիճանը բնութագրող 5 գործոն են առանձնացրել, որոնց միջոցով հնարավոր է գնահատել երկրի ճկունության աստիճանը: Այստեղ ներկայացված են 3-ի հիմնական տարրերը (քաղաքական գործոնները և ֆինանսական հատվածի խոցելիությունը չեն դիտարկվում): Այդ գործոնների միջոցով հնարավոր է դիտարկել տնտեսության տրնտեսական շուկր կլանելու և վերականգնվելու կարողությունը (ճկունություն)<sup>7</sup>:

<sup>5</sup> Զեդինակի սեփական հաշվարկ:

<sup>6</sup> ADB. (2010). “Global Economic and Financial Crisis Impact on Developing Asia and Immediate Policy Implications”, Report 1, prepared by Manu Bhaskaran and Ritwick Ghosh from the Centennial Asia Advisors, a member of the Centennial Group International as discussion materials for the ADB Regional Forum on the Impact of Global Economic and Financial Crisis” at the ADB Headquarters in Manila, Philippines, January 14-15, pp.12-13.

<sup>7</sup> Մեծ չափերի բաց տնտեսությունները հիմնականում համարվում են խոցելի արտաքին շուկերի հանդեպ, սակայն նույն խոցելիության աստիճան ունեցող երկրները կարող շուկերին տարբեր կերպ արձագանքել՝ կախված երկրի ճկունության աստիճանից:

ԵԱՏՍ վերաբերյալ պայմանագրի 62-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում նշված է, որ անդամ երկրների մակրոտնտեսական քաղաքականության ուղղություններից մեկը պետք է լինի այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կբարձրացնեն անդամ երկրների տնտեսության ներքին կայունության աստիճանը՝ ներառյալ մակրոտնտեսական կայունության ապահովումը, ինչպես նաև կայունությունը արտաքին ազդեցության նկատմամբ<sup>8</sup>: Իսկ 63-րդ հոդվածի համաձայն անդամ երկրները ձևավորում են իրենց տրնտեսական քաղաքականությունը քանակական ցուցանիշների շրջանակում, որոնք սահմանում են երկրի մակրոտնտեսական կայունությունը (տե՛ս աղ-յուսակ 2):

**Աղյուսակ 2.** ԵԱՏՍ անդամ երկրների մակրոտնտեսական կայունության աստիճանը որոշող ցուցանիշների քանակական արժեքները<sup>9</sup>

Ցուցանիշ	Ընդունելի սահման
Համախմբված պետական բյուջեի տարեկան պակասուրդ	≤ 3% ՀՆԱ-ի նկատմամբ
ՀՀ Կենտրոնական կառավարության պարտք	≤ 50% ՀՆԱ-ի նկատմամբ
Գնաճ (Սպառողական գների ինդեքսը, նախորդ տարվա դեկտեմբերը դեկտեմբերի նկատմամբ), %	Ցուցանիշ, որը չի գերազանցում կողմերից որևէ մեկի կողմից ամենացածր արձանագրած ցուցանիշին 5 և ավելի տոկոսային կետով

ԵԱՏՍ-ին անդամակցությունից հետո, ակնկալվում է, որ ՀՀ-ն ավելի բաց տնտեսություն է դառնալու, իսկ Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (ԵՏՀ) վերահսկելու է, որ ՀՀ-ն պահպանի նշված քանակական սահմանափակումները՝ երկրում մակրոտնտեսական կայունությունը ապահովելու նպատակով: Միջնաժամկետ հատվածից սկսած (ՌԴ տնտեսության վերականգման տենպերից կախված՝ նավթի գների համեմատաբար արագ բարձրացման դեպքում) և երկարաժամկետ հատվածում տնտեսական զարգացման արդյունավետությամբ պայմանավորված փուլ մտած ՀՀ-ի համար արտահանման և ՕՈՒՆ-ի ծավալների աճը հանգեցնելու է հետևյալին՝

<sup>8</sup> Договор о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года, статья 62.

<sup>9</sup> Там же, статья 63.

1. Ընկերությունների կողմից արդյունավետ գործընթացների կիրառում և արտադրողականության աճ:
2. Արտաքին շուկերի հանդեպ տնտեսության խոցելիության աստիճանի բարձրացում (ՌԴ տնտեսական աճի տեմպի):
3. Հարկային եկամուտների աճ, ինչը հնարավորություն կտա նվազեցնել հասցնել բյուջեի պակասուրդի և պետական պարտքի չափը:
4. Տնտեսության ճկունության աստիճանի բարձրացում՝

2015թ.-ից սկսած ՀՀ պետական բյուջեն կսկսի ստանալ ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացված եկամուտները: Դրդաստանի ԵԱՏՄ մասին 2014թ. մայիսի 29-ի պայմանագրին միանալու կապակցությամբ մաքսային տուրքերի գումարների բաշխման նորմատիվների չափերի համաձայն Հայաստանի դեպքում այն կազմելու է 1.11%<sup>10</sup>: 2013թ. ՌԴ ներմուծումը կազմել էր մոտ 315 մլրդ ԱՄՆ դոլար (տե՛ս աղյուսակ 3), ՄՄ անդամ և ԱՊՀ երկրների միջև Ազատ առևտրի գոտու մասին պայմանագիր կնքած երկրներից անմաքս ներմուծումը՝ մոտ 36.3 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման գերակշիռ մասը բաժին էր ընկնում այլ երկրներին:

**Աղյուսակ 3.** 2013թ. ՌԴ ներմուծումը ըստ ծագման երկրների<sup>11</sup>

Ներմուծումը՝	Ներմուծման ծավալ (ԱՄՆ դոլար)
Մաքսային միության երկրներից	19,624,192,394
ԱՊՀ երկրների միջև Ազատ առևտրի գոտու մասին պայմանագիր (առ. 2011թ. հոկտեմբերի 18) կնքած երկրներից	16,708,701,709
Այլ երկրներից	278,612,200,884
Ընդամենը	314,945,094,987

2013թ. տարբեր երկրների համար ՌԴ մաքսատուրքի սակագները տարբերվում էին միասնական մաքսային սակագներից, կախված նրանից թե ար-

<sup>10</sup> Договор о присоединении Кыргызской Республики к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года.

<sup>11</sup> ՄԱԿ-ի «UN COMTRADE DATABASE» առցանց տվյալների բազա (<http://comtrade.un.org/data/>, վերջին մուտք՝ 2014թ. հոկտեմբերի 21): Договор о зоне свободной торговли от 18 октября 2011 года (<http://cis.minsk.by/reestr/ru/index.html#reestr/view/text?doc=3183>, последний вход: 21 октября, 2014г.): Հեղինակի սեփական հաշվարկ:

ոյրք այդ ապրանքը ներառված էր այն ապրանքների ցանկում, որոնց ներմուծման ժամանակ տրամադրվում են սակագնային արտոնություններ, երբ որպես վերջիններիս ծագման երկիր համարվում են գրագացող և առավելապես թույլ զարգացած երկրները<sup>12</sup>: Շեպոտիլոն և Թարրը (2012թ.) հաշվարկել են մինչև 2020թ. ՌԴ-ի կիրառվող մաքսատուրքի միջին կշռված դրույքաչափը և հիմք ընդունելով նրանց 2013թ. գնահատականը<sup>13</sup>, ինչպես նաև այն հանգամանքը, որ եթե ՀՀ-ն 2013թ. լիներ ՄՄ անդամ, ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող ՀՀ պետական բյուջեի եկամուտները (միայն ՌԴ ներմուծվող ծավալներով պայմանավորված) կկազմեին մոտ 260 մլն ԱՄՆ դոլար:

Սակայն միջնաժամկետ հատվածում մաքսատուրքի վերաբաշխումից ՀՀ պետական բյուջե փոխանցվող գումարները կախված են լինելու հետևյալ հանգամանքներից:

1. Ինչպիսի՞ն կլինեն հիմնականում ՌԴ տնտեսական աճի տեմպերը, որից կախված կլինեն ներմուծման աճի տեմպերը, որն իր հերթին կախված է լինելու նրանից, թե արդյոք որքանով ներմուծման փոխարինման քաղաքականության շնորհիվ ՌԴ-ին կհաջողվի ի սպառ հրաժարվել այն ապրանքների ներմուծումից միջնաժամկետ հատվածում, որոնց նկատմամբ պատժամիջոցներ են սկսվել կիրառվել 2014թ. օգոստոսից<sup>14</sup>:

2. Արդյո՞ք ԵՄ երկրների նկատմամբ պատժամիջոցները կշարունակվեն: Եթե ՌԴ-ն շարունակի ներմուծել օրինակ Լատինական Ամերիկայի երկրներից, որոնք օգտվում են միասնական սակագնային արտոնությունների համակարգից, ապա կիրառվող մաքսատուրքի դրույքաչափերը ավելի ցածր կլինեն, քան ԵՄ երկրների դեպքում:

3. Որքանով կհաջողվի ՌԴ-ին ԵԱՏՄ ոչ անդամ երկրներից ներմուծումը փոխարինել ԵԱՏՄ երկրների ներմուծմամբ:

---

<sup>12</sup> Протокол О единой системе тарифных преференций таможенного союза от 12 декабря 2008 года. Решение Межгосударственного Совета Евразийского экономического сообщества (высшего органа таможенного союза) от 27 ноября 2009 г. №18, Решение Комиссии таможенного союза от 27 ноября 2009 года №130. Соглашение о единых правилах определения страны происхождения товаров от 25 января 2008 года. Соглашение о правилах определения происхождения товаров из развивающихся и наименее развитых стран от 12 декабря 2008 года.

<sup>13</sup> Shepotylo, O., Tarr, D. (2012). "Impact of WTO Accession and the Customs Union on the Bound and Applied Tariff Rates of the Russian Federation," Policy Research WP 6161, World Bank, Washington D.C.: p.24.

<sup>14</sup> Постановление правительства РФ № 778 от 7 августа 2014г. о мерах по реализации Указа Президента Российской Федерации от 6 августа 2014 г. № 560 "О применении отдельных специальных экономических мер в целях обеспечения безопасности Российской Федерации."

4. Ինչպիսի՞ն կլինեն աճի տեմպերը Բելառուսում և Ղազախստանում և ե՞րբ նախատեսվող Միասնական մաքսային սակագների ամենամյա ճշգրտումների հետևանքով կհամապատասխանեն ՌԴ-ի ԱՅԿ-ի առջև ստանձնած սակագների գծով պարտավորություններին<sup>15</sup>:

Հետևաբար, միջնաժամկետ հատվածում ՀՀ ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող ՀՀ պետական բյուջեի եկամուտները տարեց տարի կսկսեն նվազել, որի պատճառով առաջնային է դառնում ավելացնել ուղղակի հարկերից ստացվող բյուջետային եկամուտների ծավալները, քանի որ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), որը 2013թ. հարկային եկամուտների մոտ 40.2%<sup>16</sup> էր կազմում կսկսի կրճատվել: Այլ անդամ երկրներից ՀՀ ներմուծված ապրանքների դեպքում, այդ ապրանքների ԱԱՀ-ն անդամ երկրներում չի վճարվում, այլ վճարվելու է իրացման շուկա հանդիսացող անդամ երկրում<sup>17</sup>: Իսկ սա նշանակում է, որ ՀՀ ԵԱՏՄ անդամ երկրներից ապրանքների ներմուծման պարագայում մաքսային արժեքը նվազում է, ինչ էլ հանգեցնելու է ԱԱՀ-ի ավելի ցածր գումարների հավաքագրմանը: Նմանատիպ միտում է նկատվելու ՀՀ-ից արտահանվող ապրանքների դեպքում, երբ այդ ապրանքների իրացումից ԱԱՀ-ն վճարվելու է այլ ԵԱՏՄ երկրներում: Հետևաբար, միջնաժամկետ հատվածում ԱԱՀ-ից հավաքագրվող եկամուտները կնվազեն, եթե ՀՀ-ն չավելացնի ներմուծման ֆիզիկական ծավալները, որն էլ պետք է ուղղված լինի ավելացնելու արտահանման ծավալները: Իսկ այս պարագայում հիմք ընդունելով միջնաժամկետ հատվածում ՌԴ տնտեսության զարգացման հեռանկարները, առաջնայինը պետք է լինի արտահանման ծավալների աճը, ինչը հնարավորություն կտա ավելի բարձր աշխատավարձեր վճարել աշխատակիցներին, այնպես էլ ավելացնել դրանց թվաքանակը: Արտահանման ծավալների աճը նաև կապահովի ավելի մեծ չափի հասնող շահույթ: Այս ձևով կառավարությունը միջնաժամկետ հատվածում կկարողանա ապահովել ուղղակի հարկերի աճը (եկամտային և շահութահարկի միջոցով): Բյուջեի եկամուտների աճը թույլ կտա բարձրացնել ՀՀ տնտեսության ճկունության աստիճանը (հարմարվողականության), ինչպես նաև հարկաբյուջետային քաղաքականություն իրականացնելու հնարավորությունը: Անդրադառնանք ՀՀ տնտեսության ճկունության վերլուծությանը:

<sup>15</sup> Решение Коллегии Евразийской экономической комиссии от 25.08.2014 N 14 "О перечне мероприятий по реализации основных ориентиров макроэкономической политики государств - членов Таможенного союза и Единого экономического пространства на 2014 - 2015 годы," с.15(17).

<sup>16</sup> ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների առցանց տվյալների բազա «ՀՀ պետական բյուջեի ցուցանիշներ (2008-2014թթ.)», <http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>, վերջին մուտք՝ սեպտեմբերի 28, 2014թ.:

<sup>17</sup> Договор о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года, статья 72 (4), с.82-83.

Հարկաբյուջետային քաղաքականության կայունություն, որպես արտաքին շոկերին արդյունավետ արձագանքելու կարողություն: Այն իրենից ներկայացնում է կառավարության հարկաբյուջետային միջոցառումներ իրականացնելու հնարավորությունը, որը նկարագրելու համար օգտագործում են երկու մակրոտնտեսական ցուցանիշ՝ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, ինչպես նաև այդ ցուցանիշի փոփոխությունը<sup>18</sup>: Որքան բարձր լինի այս ցուցանիշը և դրա փոփոխությունը, այնքան ավելի սահմանափակ կլինի կառավարության հնարավորությունը հաղթահարելու արտաքին տնտեսական շոկերը: 2004-2013թթ. ՀՀ կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազագույն արժեքը (16.1%) գրանցվել էր 2004թ. (տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4.** Կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք<sup>19</sup>

Ցուցանիշ	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (%)	32.4	24.3	18.7	16.1	16.4	40.4	39.9	42.2	44.1	43.5
Կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք/ՀՆԱ հարաբերակցության փոփոխություն (%)	-	-8.1	-5.6	-2.6	0.3	24.1	-0.6	2.3	1.9	-0.5
Կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտքի աճի տեմպ (%)	-	-11.9	-8.9	2.2	15.3	117.4	8.5	15.5	10.7	5.5

2009թ. կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը կազմել էր 40.4%, իսկ պարտքի աճը՝ 117.4%: 2012թ.-ից սկսած համախառն չմարված պարտքի աճի տեմպը դանդաղել էր՝

<sup>18</sup> Boorman, Jack, Fajgenbaum, José, Ferhani, Hervé, Bhaskharan, Manu, Arnold, Drew, Alberto Kohli, Harpaul (2013). "The Centennial Resilience Index: Measuring Countries' Resilience to Shock," Centennial Group International, Washington DC: USA, p.4.

<sup>19</sup> ՀՀ ԱՎԾ, ՀՀ պետական ֆինանսների վիճակագրության կենտրոնական կառավարության պարտքի առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=385>, վերջին մուտք՝ 2014թ. սեպտեմբերի 29): ՀՀ ԱՎԾ Ազգային հաշիվների տարեկան ցուցանիշների «ՀՆԱ օգտագործումը (ըստ ծախսային հիմնական բաղադրիչների)», առցանց տվյալների բազա (<http://www.armstat.am/am/?nid=263>, վերջին մուտք՝ սեպտեմբերի 15, 2014թ.): Հեղինակի սեփական հաշվարկ:



կազմելով 5.5%, իսկ պարտքը ՀՆԱ-ի նկատմամբ դարձել էր 43.5%, որը մտնում է ԵՏՀ-ի կողմից տնտեսական կայունությունը որոշող սահմանված շեմին, որը գերազանցելու դեպքում ԵՏՀ-ն մշակելու է համատեղ միջոցառումների ցանկը (Բարձրագույն խորհրդի կողմից հաստատված), որոնք ուղղված են լինելու կայունացնելու տնտեսական իրավիճակը<sup>20</sup>: Մյուս կողմից, հիմք ընդունելով ԵՏՀ-ի կոլեգիայի 2013թ. նոյեմբերի 5-ի № 251 որոշումը, ակնկալվում է, որ հետագայում տնտեսական ճգնաժամի սպառնալիքի աճի դեպքում ԵՏՀ-ն մշակելու մոտեցումներ անդամ երկրների կողմից համաձայնեցված և համատեղ գործողություններ իրականացնելու նպատակով<sup>21</sup>: Այս պարագայում ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության կայունության և տնտեսության ճկունության աստիճանը բարձրացնելու նպատակով առաջնայինը պետք է լինեն հետևյալը (եթե ՌԴ տնտեսությունում բացասական զարգացումները համեմատաբար ավելի արագ տեմպով հաղթահարվեն)

1. 2015-2017թթ. նվազեցնել կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտքը, ինչը հիմնականում պայմանավորված կլինի ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող ՀՀ պետական բյուջեի եկամուտների միջոցով (եթե ՌԴ տնտեսական վիճակով պայմանավորված ներմուծման ծավալները կտրուկ կրճատվեն, ապա ՀՀ բյուջե փոխանցվող ծավալները ևս կնվազեն, որի հետևանքով ՀՀ կենտրոնական կառավարության պարտք/ ՀՆԱ հարաբերակցությունը կշարունակի մնալ բարձր միջնաժամեկտ հատվածում<sup>22</sup>)՝ առնվազն արտահանման և տրանսֆերտների աճի տեմպերի պահանման դեպքում:

2. 2018-2020թթ. կրճատել կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտքի չափը ուղղակի հարկերից ստացվող գումարների հաշվին, որն իր հերթին պայմանավորված է լինելու, նրանից, թե որքանով կհաջողվի ՀՀ կառավարությանը ավելացնել արտահանման ծավալները և ներգրավվել ՕՌԻՆ (ինչն էլ իր հերթին կախված է լինելու ՌԴ տնտեսական աճի տեմպերից):

Այս ճանապարհով ՀՀ կառավարությունը կկարողանա նվազեց կենտրոնական կառավարության համախառն չմարված պարտք/ ՀՆԱ հարաբե-

<sup>20</sup> Протокол о проведении согласованной макроэкономической политики (Приложение N 14 к Договору о Евразийском экономическом союзе от 29 мая 2014 года), 4(2), с.4.


<sup>21</sup> Решение Коллегии Евразийской экономической комиссии от 05.11.2013 N 251 "О перечне мероприятий по реализации основных ориентиров макроэкономической политики государств - членов Таможенного союза и Единого экономического пространства на 2013 - 2014 годы", с.2-4.

<sup>22</sup> ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նույնիսկ կարող է որոշակիորեն ավելանալ՝ հաղթահարելու այս բացասական զարգացումների հետևանքները:

րակցության մեծությունը, ինչ էլ հետագայում հնարավորություն կտա կառավարությանը արտաքին շուկերի պարագայում հիմնականում արտաքին պարտքի ավելացման շնորհիվ հաղթահարել ապագայում տեղի ունեցող ճգնաժամի հետևանքները: Եթե 2015-2016թ. ՀՀ-ում ռեցեսիա սկսի արտաքին շուկերով պայմանավորված (մասնավորապես ՌԴ տնտեսական անկմամբ պայմանավորված), ապա 2015-2016թթ. ներմուծման մաքսային տուրքերի գումարների բաշխումից ստացվող եկամուտները կլնեն բավականին ցածր, միայն հնարավորություն կտան կառավարությանը արձագանքել ստեղծված իրավիճակին, և միայն արտաքին պարտքի մեծացմամբ հնարավոր կլինի արձագանքել բացասական զարգացումներին, որը կառավարությունը չի կարողանա մեծ չափով ավելացնել: Իսկ այս պարագայում, եթե կառավարությանը չհաջողվի արդյունավետ կերպով արձագանքել երկրում արժույթային ճգնաժամ արձանագրվելու պարագայում, դրա սոցիալական հետևանքը ավելի խորը կլինի:

*Տնտեսության հարմարվողականություն:* Այստեղ դիտարկվում են սոցիալական պաշտպանության համակարգը և աշխատանքի շուկայի ճկունությունը: Քանի որ ՀՀ արտաքին պարտքի մակարդակը բավականին ցածր էր նախքան ճգնաժամը, ՀՀ-ն կարողացավ արտաքին պարտքի ավելացման շնորհիվ ավելացնել սոցիալական պաշտպանությանը ուղղվող ծախսերը 2009թ.: Սոցիալական աջակցության և պաշտպանության տեսանկյունից ՀԲ-ն (2011թ.) առանձնացնել է երեք հենասյուն, որոնց միջոցով հնարավոր է արդյունավետ կերպով արձագանքել ճգնաժամին (տե՛ս գծապատկեր 1): ՀՀ-ում գործազրկության նպաստները հանդես եկան որպես կառավարության կողմից շուկին արձագանքելու առաջին հակաճգնաժամային միջոցառումը, սակայն ինչ վերաբերում է սոցիալական աջակցության համակարգում ընդգրկվածության աստիճանին, այն չէր համապատասխանում գրանցված գործազրկության մակարդակին, իսկ 2009թ. ՀՀ-ն նաև ավելացրել էր նվազագույն կենսաթոշակի չափը և իրականացրեց ՀՀ-ն նաև իրականացրեց հանրային աշխատանքներ ծրագիրը (Կենսական նշանակություն ունեցող ճանապարհների վերանորոգման ծրագիր)<sup>23</sup>:

<sup>23</sup> World Bank (2011). *The Jobs Crisis: Household and Government Responses to the Great Recession in Eastern Europe and Central Asia*, WB, Washington, DC: USA, pp.58,67,82,88.



**Գծապատկեր 1.** ճգնաժամին արդյունավետ արձագանքման երեք հեռանայունները<sup>24</sup>

01.01.2014թ.-ից ուժի մեջ մտած ՀՀ Ջբաղվածության մասին օրենքի համաձայն գործազրկության նպաստ ստացողները 2014թ. միայն այն անձիք էին, որոնք այն ստանալու համար դիմել էին 2013թ.<sup>25</sup>: Ըստ Ալմեյդայի և այլոց (2012թ.)<sup>26</sup> գործազրկության նպաստի չափը և վճարման տևողությունը պետք է կախված լինի աշխատաշուկայում առկա թափուր աշխատատեղերից (աշխատուժի նկատմամբ պահանջարկից): Իսկ զբաղվածության նոր մոդելը հիմնականում նպաստում է աշխատուժի առաջարկի ավելացմանն, ինչն էլ իր հերթին ցանկալի ազդեցությունն է բերում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում, երբ կառավարության կողմից իրականացվող հարկային, արդյունաբերական, ներդրումային և այլ քաղաքականությունների շնորհիվ առաջանում է պահանջարկ համապատասխան աշխատուժի նկատմամբ: Կարճաժամկետ հատվածում ակտիվ զբաղվածության քաղաքականության ծրագրերն ուղղված են լինելու թափուր աշխատատեղերի բավարարմանը՝ ավելացնելով զբաղվածների թիվը, կամ էլ խթանելով ձեռնարկատիրական գործունեությունը: Հիմնականում դրանք ցածր վարձատրության և բարձր որակավորում չպահանջող աշխատատեղեր են լինելու, քանի որ

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>25</sup> Հայաստանի հանրապետության օրենքը Ջբաղվածության մասին առ 11.12.2013թ., ՀՕ-152-Ն, ՀՀՊՏ 2013.12.28/73(1013).1, Հոդ.1186.14, հոդված 26 (4-19):

<sup>26</sup> Almeida, R.; Arbelaez, J.; Honorati, M.; Kuddo, A.; Lohmann, T.; Ovadiya, M.; Pop, L.; Sanchez Puerta, M.; Weber, M., *Improving Access to Jobs and Earnings Opportunities: The Role of Activation and Graduation Policies in Developing Countries*, Social Protection Discussion Paper No. 1204, World Bank, Washington D.C.: United States, p.33.

հիմնականում աջակցությունը կտրվի աշխատաշուկայում աննրցունակ ճանաչված անձանց: Միջնաժամկետ հատվածում որևիցե շուկվ պայմանավորված տնտեսական անկման պարագայում երբ ավելանա է գործազուրկների թիվը, ՀՀ-ում լիազոր մարմինը չի կարողանա նույնիսկ աննրցունակ համարվող անձանց աշխատանքի տեղավորել, եթե կառավարությունը չսկսի իրականացնել աշխատուժի նկատմամբ պահանջարկի մեծացմանն ուղղված քաղաքականություն: Այս պարագայում առաջնային է դառնում հանրային աշխատանքների ծրագրի իրականացումը, սակայն դրա մշակման համար ժամանակ է հարկավոր (համապատասխան ենթակառուցվածքների, ծրագրի շահառուների, ինչպես նաև վճարման չափի ընտրություն, ֆինանսավորման հայթայթում): Իսկ անմիջապես ազդող առաջնային գործիքը՝ գործազրկության նպաստը բացակայում է: Իսկ սա նշանակում է, որ ավտոմատ կայունացնող ծրագրերից միայն սոցիալական աջակցության ծրագրերի միջոցով է ՀՀ կառավարությունը փորձելու հաղթահարել ճգնաժամի բացասական ազդեցությունը: Այս պարագայում ճգնաժամին ավելի արագ արձագանքելու նպատակով հարկավոր է օրենքով ամրագրել գործազրկության նպաստի վճարումը միայն ճգնաժամերի դեպքում (երբ ռեցեսիա է գրանցվում կամ ՀՆԱ-ի աճի տեմպը դառնում է զրոյական կամ բացասական) և միայն ճգնաժամի պատճառով աշխատանքը կորցրածների համար, քանի որ ՀՀ-ի կողմից առաջարկված բոլոր հենասյուների ծրագրերում շահառուներին ընդգրկելը ավելի երկար ժամանակ կպահանջի՝ համապատասխան ծրագրերի կամ միջոցառումների մշակման, օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու և իրականացնելու պատճառով: Թերևս, բացառություն կարող է կազմել սոցիալական աջակցության համակարգը (շահառուների ընտրության տեսանկյունից), սակայն այս պարագայում հնարավոր է, որ ոչ բոլոր գործազուրկները բավարարեն շահառուների ընտրության չափանիշներին և ընդգրկվեն այդ համակարգում: Հետևաբար, այս իրավիճակում միջնաժամկետ հատվածում ճգնաժամին արձագանքելու տեսանկյունից միջոցառումների ազդեցությունը կարող է որոշակիորեն ուշացած լինել: Ինչ վերաբերում է աշխատանքի շուկայի ճկունությանը դիտարկենք աշխատանքի շուկայի արդյունավետությունը նկարագրող հիմնական ցուցանիշների համատեքստում<sup>27</sup>: Այս ցուցանիշների վերլուծությունը փաստում է, որ ՀՀ աշխատանքի շուկան բավականին ճկուն է և այս պարագայում միջնաժամկետ հատվածում ճգնաժամի դեպքում, աշխատակիցները կարող են համաձայնվել ավելի ցածր աշխատավարձի դիմաց աշխատել (հատկապես ոչ բարձ որակավորում պահանջող աշխատանքի դեպքում), քանի որ իրա-

<sup>27</sup> WEF (2014). *The Global Competitiveness Report 2014–2015: Full Data Edition*, ed. Klaus Schwab, Geneva, Switzerland: World Economic Forum, pp. 113, 484-487, 489:

կան աշխատավարձերը 2010-2011թթ. և 2013թ. անկում<sup>28</sup>: Հետևաբար, միջ-նաժամկետ հատվածում վճռորոշը կլինի նախքան ճգնաժամը (որը կարող է տեղի ունենալ ապագայում) արձանագրված գործազրկության մակարդակը և վերջինիս նպաստների վերացումը:

*Տնտեսական հիմքի բազմազանություն:* ՀՀ տնտեսական աճը ճգնաժամից հետո ներքին պահանջարկից ավելի է կախված դարձել<sup>29</sup> Եթե նախքան ճգնաժամը 2004-2008թթ. ներքին պահանջարկ/ ՀՆԱ հարաբերակցությունը անընդհատ նվազում էր, ապա 2009թ.-ից այդ հարաբերակցությունը գերազանցում է 100%-ը: Ներքին պահանջարկն իր հերթին պայմանավորված էր հիմնականում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերից: ՀՀ տնային տնտեսությունների իրական վերջնական սպառման ծախսերը միջնաժամկետ հատվածում խոցելի կլինեն ՀՀ ուղարկվող դրամական փոխանցումների փոփոխությունից, եթե ՀՀ տնային տնտեսությունների եկամուտների աճը պայմանավորված չլինի հիմնականում արտադրողականության աճով: Թեպետ ՀՀ տնտեսության շարժիչ ուժը ներքին պահանջարկն է, որն էլ հանդես է գալիս որպես տնտեսության ճկունությանը նպաստող գործոն, քանի որ արտահանում/ ՀՆԱ հարաբերակցությունը փոքր է, սակայն ներքին պահանջարկի փոփոխության վրա նշանակալիորեն ազդում են տրանսֆերտների ծավալների փոփոխությունը, որն էլ իր հերթին կրճատվող վերջնական սպառման ծախսերի միջոցով (տնային տնտեսությունների ծախսերի կրճատմամբ պայմանավորված) բացասաբար է անդրադառնում ընկերությունների հասույթի և ներդրումների վրա, ինչպես նաև աշխատանքի շուկայի վրա: Հետևաբար, արտաքին շուկերի դեպքում ՀՀ տնտեսության ներքին պահանջարկը չի կարող համարվել տնտեսության ճկունությանը նպաստող հիմնական՝ արտաքին շուկերի ազդեցությունը մեղմող գործոն:

Տնտեսության ճկունությունը նկարագրող մեկ այլ գործոն է հանդիսանում օտարերկրյա ներդրողների կամ ֆինանսական միջոցներ տրամադրողների խումբը (տնտեսության կախումը այդ խմբից): Եթե դիտարկենք ՀՀ իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումները, ապա պորտֆելային ներդրումները բավականին ցածր ծավալների էին<sup>30</sup>, ինչն էլ նշանակում է, որ միջնաժամկետ հատվածում կապիտալի արագ և մեծ ծավալի արտահոսք չի լինի ռեցեսիա տեղի ունենալու դեպքում: ՀՀ տնտեսության կա-

<sup>28</sup> Հեղինակի սեփական հաշվարկ: Նշում՝ 2005=100:

<sup>29</sup> Օգտագործվել է ՏՀԶԿ-ի տրված սահմանումը (<http://www.oecd.org/eco/outlook/eosources-notestostatisticalannextables1-10demandandoutput.htm>, վերջին մուտք՝ 2014թ. նոյեմբերի 21) Հեղինակի սեփական հաշվարկների ժամանակ: Նշում՝ 2005=100:

<sup>30</sup> ՀՀ ԱՎԾ արտաքին հաշիվների «Վճարային հաշվեկշիռ 6» առցանց տվյալների բազա առ. 30.09.2014թ. (<http://www.armstat.am/am/?nid=443>, վերջին մուտք՝ 21/11/2014:

խումը ապրանքների արտահանումից (արտահանում/ՅՆԱ հարաբերակցությունը՝ որպես արտահանումից կախվածությունը նկարագրող ցուցանիշ)<sup>31</sup> բավականին ցածր է եղել և 2008-2013թթ. չի գերազանցել 15%-ը<sup>32</sup>, սակայն կառուցվածքը ապրանքների և շուկաների տեսանկյունից դիվերսիֆիկացված չէ՝ հիմք ընդունելով ապրանքների և շուկաների տեսակարար կշիռը: Յետևաբար, ՀՀ առանձին ապրանքների արտահանման ծավալները հիմնականում խոցելի են լինելու տարբեր երկրների տնտեսական աճի տեմպերի հանդեպ: Իսկ սա նշանակում է, որ շուկաների և ապրանքների ավելի լայն դիվերսիֆիկացիա է անհրաժեշտ: Հաշվի առնելով արտահանման ծավալների ավելացման անհրաժեշտությունը արդյունավետությամբ պայմանավորված տնտեսական զարգացման այս փուլում, ինչպես նաև ՀՀ տնտեսության ապրանքների արտահանումից կախվածության ցածր մակարդակը արտահանման ծավալների աճը կնպաստի նրան, որ ՀՀ ընկերությունները մասշտաբի էֆեկտի հասնեն, գործառնական արդյունավետություն ապահովեն: Անուղղակի հարկերի վճարումը ԵԱՏՄ անդամ երկրներում, գնային մրցունակությունը հնարավորություն կտան ՀՀ արտադրողներին ավելացնելու արտահանման ծավալները հատկապես ՌԴ, սակայն մեկ այլ գործոն է լինելու դոլարի նկատմամբ այդ երկրների արժույթների արժեզրկման չափը, քանի դեռ բացակայում է միասնական արժույթը: ՌԴ տնտեսության աճի տեմպերի համեմատաբար արագ վերկանգման դեպքում կբարձրանա ՀՀ իրական հատվածի խոցելիության աստիճանը: Մյուս կողմից արտահանումից ստացվող եկամուտները հնարավորություն կտան կրճատելու ընթացիկ հաշիվ/ՅՆԱ հարաբերակցությունը (այլ հավասար պայմանների դեպքում), ապահովել փոխարժեքի կայունությունը, ինչպես նաև նվազեցնել ՀՀ կենտրոնական կառավարության պարտք/ՅՆԱ հարաբերակցությունը՝ բարձրացնելով մակրոտնտեսական կայունության աստիճանը:

ՀՀ տնտեսությունը, որպես արդյունավետությամբ պայմանավորված տնտեսական զարգացման փուլ մտած երկիր, միջնաժամկետ հատվածում պետք է ձգտի բարձրացնել երկրի ճկունության և արդյունավետության աստիճանը: Հիմնականում կաճի պատրաստի սննդամթերքի արտադրանքի, ինչպես նաև գյուղատնտեսական ապրանքների արտահանման ծավալների աճը, ինչը ՀՀ մշակող արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը խոցելի

<sup>31</sup> Boorman, Jack, Fajgenbaum, José, Ferhani, Hervé, Bhaskharan, Manu, Arnold, Drew, Alberto Kohli, Harpaul (2013). "The Centennial Resilience Index: Measuring Countries' Resilience to Shock," Centennial Group International, Washington DC: United States p.5.

<sup>32</sup> ՀՀ Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական ցուցանիշների առցանց տվյալների բազա «ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ (ամսական)», (<http://www.minfin.am/index.php?cat=69&lang=1>, վերջին մուտք՝ նոյեմբերի 21, 2014թ.):

Են դարձնում հատկապես ՌԴ տնտեսության աճի տեմպերից (ռեցեսիայի կամ եկամտի էֆեկտ): Միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում արտահանման ծավալների աճի միջոցով ուղղակի հարկերի ավելացումը կարող է մեղմել դրամական փոխանցումների կրճատումը կարճաժամկետ և միջնաժամկետ հատվածում: Հարկային եկամուտների աճը ՀՀ կառավարությանը հնարավորություն կտա սոցիալական պաշտպանության միջոցով մեղմելու արտաքին շոկերով պայմանավորված տնային տնտեսությունների վրա բացասական ազդեցությունը: Հետևաբար, կարճաժամկետ հատվածում առաջնայինը պետք է լինի հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը, իսկ միջնաժամկետ հատվածում գործառնական արդյունավետության ապահովում՝ գնային մրցունակությունը պահպանելու և արտահանման ծավալները ավելացնելու համար:

### ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

**ՀՀ տնտեսական զարգացման արդյունավետությամբ պայմանավորված փուլի և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության մարտահրավերներն ու հնարավորությունները տնտեսության խոցելիությունը նվազեցնելու գործում**

*Բանալի բառեր. տնտեսական զարգացում, Եվրասիական տնտեսական միություն, արտաքին շուկ, տնտեսության ճկունություն, մակրոտնտեսական կայունություն*

Հոդվածում քննարկվում են Հայաստանի մարտահրավերները, որպես մի երկրի, որն անցում է կատարել տնտեսական զարգացման արդյունավետությամբ պայմանավորված փուլ, ինչպես նաև որպես Եվրասիական տնտեսական միության անդամ պետության: «Centennial Group International»-ի հայեցակարգային հիմքերի հիման վրա հեղինակը քննարկում և վերլուծում է տնտեսության ճկունության հինգ հիմնական բաղադրիչներից երեքը, մակրոտնտեսական խոցելիությունն արտաքին շուկերի հանդեպ նվազեցնելու և դրանց բացասական ազդեցությունը տնտեսության վրա մեղմելու նպատակով:

### Анна МАКАРЯН

**Проблемы и возможности на стадии экономического развития Республики Армения основанной на эффективности и после вступления в Евразийский экономический союз для снижения уязвимости экономики**

*Ключевые слова: экономическое развитие, Евразийский Экономический Союз, внешний шок, гибкость экономики, макроэкономической стабильность.*

В статье рассматриваются проблемы, с которыми сталкивается Армения как «экономика основанная на эффективности» в этой сатдии экономического развития и ка государство-членом Евразийского экономического союза. На основе модели «Centennial Group International» автор рассматривает и анализирует три из пяти составных компонентов устойчивости экономики, чтобы снизить макроэкономическую уязвимость страны к внешним шокам, и минимизировать негативное влияние этих шоков на реальный сектор экономики.

### Anna MAKARYAN

**The challenges and opportunities of the efficiency-driven stage of the economic development of the Republic of Armenia and upon the accession to the Eurasian economic union in decreasing the vulnerability of economy**

*Key words: economic development, macroeconomic vulnerability, Eurasian Economic Union, external shock, resilience of economy, macroeconomic stability*

The article discusses the challenges Armenia faces as a nation in the efficiency-driven stage of economic development and as a member-state of the Eurasian Economic Union. Based on the conceptual model proposed by Centennial Group International the author discusses and analyzes three (main elements) out of five integral parts of resilience of an economy to decrease macroeconomic vulnerability to external shocks, and minimize the negative impact of these shocks on the real sector of economy.